դարեալ պատուական ակամբք եւ այլ անօթք շինեալ յաւուրս սորա ։

Իսկ յաղագս Թաղելոյ զմարմին Յովակիմայ 'ի Բրխասոս հանգուցելոյ 'ի վանս Ս. Փրկչի, կրեցին միաբանք ոչ սակաւ նեղութիւնս. զի դատաւոր քաղաքին արգել զայն և ոչ ետ թոյլ թաղել զնա անդ. մինչեւ բազում աղաչանօք հազիւ ուրեմն կարացին հաճել զմիտս նորա խոստանալով հատուցանել նմա ինն քսակս արծաթոյ. 'ի վերայ այսր զիջաւ 'ի բարկութենէ, և ապա հրամայեաց թաղել զնա ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Ընտրութիւն Պետրոս Եպիսկոպոսի ։ Դռնապանք Ս. Յարութեան ։ Նաւախտաւորաց ։ Մաքսապետ Յոպպէի ։ Ալեպպիք Երուսաղէմի ։ Կաւտակոյն Դամասկոսի ։ Գիւղական Ֆելլահք ։ Մաքսապետն Յոպպէի ։

Զկնի վախճանի Յովակիմ Պատրիարքի և անցանելոյ աւուրց ինչ 'ի վերայ, ժողովեցան միաբանք յեկեղեցի Ս. Յակոբայ, ուր հաճութեամբ և խորհրդով ամենեցուն ընտրեցին զՏէր Պետրոս Արք եպիսկոպոսն Եւդոկիացի, որ էր Լուսարար կամ Փակակալ տաճարի Ս. Յակոբայ, լինել Պատրիարք Աթոռոյն Երուսաղէմի. թէպէտ նա բազմիցս հրաժարեցաւ, անբաւական համարելով զինքն այնմ ծանր և դժուար պաշտօնին, այլ 'ի վերջոյ զիջեալ 'ի թախանձանս միաբան եղբարց յանձն առ, որպէս գրէ նա ինքն Պետրոս առ Պատրիարքն Բիւզանդիոյ. «Գիտելով աւաղ զներքին և զարտաքին զանտանելի ցաւս Ս. Աթոռոյն, զահի հարեալ եմ և դողամ. ոչ այնքան սարսեցին երբեք մանկունքն 'ի Բաբելոնեան հնոցէն, որքան ես 'ի պաշտօնէս յայսմանէ. զի նոքա աներկիւղ դիմեցին 'ի հուրն յուսացեալ 'ի սրբութիւն անձանց իւրեանց, իսկ ինձ չիք վստահութիւն 'ի տեսականս և 'ի գործնականս. աղաչեմ չհայիլ յերեսս մարդոյ, այլ արժանաւորութիւն անձին. գիտէ Տէր զի 'ի հարկեցուցիչ բանից միաբանից ետու հաւանութիւն, եւ ոչ ներքին յօժարութեամբ. զի հրա-